ԶԵԿՈՒՅՑ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԻՀԿ

ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-ԻՆ ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՒՄԱՐՏԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

զեկուցող՝ «Ոստիկանության քաղաքացիական վերահսկողության կենտրոն» ԻՀԿ Նախագահ, ինքը և ՆԳ Նախարարին կից հասարակական խորհրդի անդամ Մ. Ա. Ավետիսյան

ԳՅՈՒՄՐԻ - 2025

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ

ԶԵԿՈՒՅՑ

«Ոստիկանության քաղաքացիական վերահսկողության կենտրոն» ԻՀԿ 2025 թվականի մարտի 17-ին իրականացված ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի տեխնիկական միջոցների ստուգման վերաբերյալ:

Ստուգմանը մասնակցել են ԻՀԿ Նախագահ Մ. Ավետիսյանը, ՊԾ ՇՄ գումարտակի տեխնիկայի գծով ավագ տեսուչ, Գ. Գ. Աշչիյանը:

Ստուգման են ներկայացվել ՊԾ ՇՄ գումարտակի պլանշետները և անհատական ռադիոկապի միջոցները:

Ստուգումների արդյունքում արձանագրվել է, որ քանակական տարբերություն առկա չէ, բացառությամբ 2 պլանշետի, և 2 անհատական ռադիոկապի միջոցների, որոնցից 1 պլանշետ, և 2 անհատական ռադիոկապի միջոց գտնվում է ՊԾ ՄՔՎՎ ՄԲ ՀԿԳ ավագ տեսուչ Լ. Բաբայանի, իսկ 1 պլանշետը գտնվում է Քննչական կոմիտեի ՇՄՎ-ում:

Ստուգման են ներկայացվել ՊԾ ՇՄ 1-ին վաշտի և վարչակազմի մոտ գտնվող, ինչպես նաև պահեստում առկա մնացորդ տեխնիկական միջոցները: 2-րդ վաշտին ամրակցված տեխնիկական միջոցները չեն ստուգվել:

IMEI համարներով ստուգվել են միայն պահեստում, զինանոցում և տեխնիկայի սենյակում առկա տեխնիկական միջոցները: Ծառայության մեջ գտնվող պարեկային ծառայողներին կցված տեխնիկական միջոցները IMEI համարներով չեն համեմատվել:

ԻՀԿ-ն անհրաժեշտ է համարում նշել, որ ստուգման արդյունքում պարզ է դարձել, որ վարչակազմի բոլոր անդամների մոտ առկա է եղել մեկական տեխնիկական միջոց, բացառությամբ 1-ին վաշտի հրամանատարի, ում մոտ առկա է եղել 2 պլանշետ, և 2 անհատական ռադիոկապի միջոց:

Հիմնվելով վերոշարադրյալ փաստերի համադրմամբ՝ արձանագրվել է հետևյալը.

- Փաստացի քանակային շեղում առկա չէ
- ԻՀԿ-ն չի բացառում, որ ծառայության մեջ գտնվող պարեկային ծառայողներին կցված տեխնիկական միջոցների IMEI համարները չեն համապատասխանում ՆԳՆ կողմից ձեռք բերված տեխնիկական միջոցներին:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 22323A0332 և 22323A0216 IMEI համարներով անհատական ռադիոկապի միջոցները ստուգման ներկայացվել են ավելի ուշ, ինչը կապված է եղել ՊԾ ՇՄ 1-ին վաշտի հրամանատարի ինքնազգացողության կտրուկ վատթարացմամբ, ԻՀԿ-ն չի բացառում, որ վերոնշյալ ռադիոկապի միջոցներից առնվազն մեկը մինչև ստուգման ներկայացվելը կարող էր գտնվել որևէ այլ անձի մոտ կամ վայրում:

Վերլուծելով վերոնշյալ խնդիրները ԻՀԿ-ն առաջարկում է

- Անհատական ռադիոկապերի վրա տեղադրել տեղորոշիչ սարքեր: Պահեստում գտնվող և չօգտագործվող ռադիոկապի միջոցները ևս ամսական մեկ անգամ միացնել, որպեսզի համակարգը տեղորոշի գտնվելու վայրը:
- Գումարտակում առկա է 250 միավոր անհատական ռադիոկապի միջոց, որից միաժամանակ օգտագործվում է առավելագույնը՝ 90-ը: Առաջարկում ենք, որպեսզի կամ յուրաքանչյուր պարեկային ծառայողի կցվի անհատական ռադիոկապի միջոց, և ստացականով հանձնվի իրեն, կամ գումարտակից ՆԳՆ տնտեսական վարչությանը հետ հանձնվի չօգտագործվող քանակությամբ անհատական ռադիոկապի միջոցները:
- Ձեռնարկել անհրաժեշտ քայլեր ՔԿ ՇՄԿ-ում գտնվող պլանշետի հետվերադարձի ուղղությամբ, կամ ունենալ անհրաժեշտ փաստաթղթեր և ապրանքի ելքի օրդերներ:
- ՊԾ ՄՔՎՎ ՄԲ տեսուչին հրահանգել վերադարձնել ՊԾ Շիրակի մարզի գումարտակին ամրակցված տեխնիկական միջոցները:

Նախագահ՝ Մ. Ա. Ավետիսյան

Կ.Տ.

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ